ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, ԱՊՐԻԼ-ՀՈՒՆԻՍ, 2018 ԹՎԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ՆԱԽԱԲԱՆ

2018 թվականի երկրորդ եռամսյակում Հայաստանի Հանրապետությունում Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) իրականացման աշխատանքներն առավելապես ուղղված են եղել 2018թ. ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման նպատակով պետական մարմինների և արդյունահանող կազմակերպությունների կողմից ներկայացվող հաշվետվությունների ձևաչափերը մշակելուն և դրանց իրավական կարգավիճակ շնորհելուն, ինչպես նաև իրական սեփականատերերի բացահայտմանն ուղղված իրավական ակտերի նախագծերի մշակմանը, որոնք միտված են 2020թ. հունվարի 1-ի դրությամբ հանրության համար հասանելի առցանց իրական սեփականատերերի ռեգիստր ունենալուն:

Բացի այդ, հանքարդյունաբերության գործունեության թափանցիկության ոլորտում գրանցվեց զգալի առաջընթաց. համաձայն ԱՃԹՆ-ի համապատասխանեցման շրջանակներում ընդունված իրավական ակտերով սահմանված պահանջների՝ Էներգետիկ ենթակառուցվածների և բնական պաշարների նախարարության կողմից հրապարակվեցին մետաղական հանքաքար արդյունահանող կազմակերպությունների հետ կնքված ընդերքօգտագործման պայմանագրերը, ինչպես նաև ԱՃԹՆ-ի ստանդարտով սահմանված՝ օգտակար հանածոյի արդյունահանման և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության մասով գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը:

Կառավարության կազմում կատարված փոփոխությունների արդյունքում ԲՇԽ-ի կազմում տեղի ունեցան փոփոխություններ:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են նաև հանրային իրազեկման բարձրացման մի շարք միջոցառումներ, ինչպես նաև սկսվել են Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքի բովանդակության մշակման աշխատանքները:

Համաձայն ԱՃԹՆ-ի խորհրդի կողմից Հայաստանի համար սահմանված վերջնաժամկետի՝ հաշվետու ժամանակահատվածում ԲՇԽ-ի կողմից հաստատվեց և հրապարակվեց 2017թ. ԱՃԹՆ-ի տարեկան հաշվետվությունը: Հաշվետվության մեջ ի մի են բերված անցյալ տարվա ընթացքում Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրմանն ուղղված աշխատանքները:

Ականջալուր լինելով ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նամակ-խնդրագրին՝ ԱՃԹՆ-ի խորհուրդը որոշում է ընդունել հետաձգել Հայաստանի կողմից 2018թ. ԱՃԹՆ-ի ազգային զեկույցի հրապարակման վերջնաժամկետը՝ մինչև 2019թ. մարտի 9-ը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության 2017-2018թթ. ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի՝ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի գործունեության և ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների վերաբերյալ պետք է ներկայացվեն եռամսյակային հաշվետվություններ, որոնք հաստատվում են ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի կողմից:

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՃԹՆ-Ի 2018Թ. ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ՆՊԱՏԱԿԸ	**Մատչելի և ժամանակին տեղեկատվության ապահովում**			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 2. ՀՀ ԱՃԹՆ-ի կայքի ստեղծում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ ՀՀ ԱՃԹՆ-ի կայք, տվյալների բազաներ, տվյալների բազաների վերլուծության գործիքներ՝ տեղեկատվությունը մատչելի տեսքով և առցանց ներկայացնելու, հարցումներ կատարելու, տվյալներն ազատ տեսնելու համար, առցանց հաշվետվությունների ներկայացման պորտալի ձևավորում *Վերջնաժամկետը՝* 2018թ. հունիս	Իրականացվել է	ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ընտրված կազմակերպություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 4. ԱՃԹՆ-ի կայքի համալրում համապատասխան տեղեկատվությամբ (հաշվետվությունների, տեսագրությունների, արձանագրությունների հրապարակում կայքում)	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ կայքում հրապարակված հաշվետվություններ, տեսագրությունների, արձանագրություններ *Վերջնաժամկետը՝* ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 5. Հանքարդյունաբերության	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**

ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելի լեզվով հրապարակում և տպագրում, սոցիալական գովազդի պատրաստում	*Արդյունքները՝* տեղեկատվական թերթիկներ, ինֆոգրամներ, ԱՃԹՆ-ի հաշվետվություն, ԲՇԽ-ի տարեկան հաշվետվություն, տեղեկատվական տեսահոլովակներ *Վերջնաժամկետը՝* ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 6. Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ քարոզչության իրականացում և լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով (YouTube, Twitter, Facebook և այլ ցանցեր)	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ սոցիալական ցանցերում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հրապարակված տեղեկատվություն *Վերջնաժամկետը՝* ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 7. Հաղորդակցության ռազմավարության[1] մշակում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ հաղորդակցության ռազմավարության նախագիծ *Վերջնաժամկետը՝* 2018թ. ապրիլ	Իրականացվել է	ԲՇԽ, Հայաստանի ամերիկյան համալսարանի պատասխանատու հանքարդունաբերության կենտրոն (ՀԱՀ ՊՀԿ), ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 8. Հաղորդակցության ռազմավարության հաստատում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ հաղորդակցության ռազմավարություն	Չի իրականացվել	ԲՇԽ	Չի հաստատվել, քանի որ հաղորդակցության

[1] Հեռահաղորդակցության ռազմավարությունը 2017թ. մայիսի 5-ի նիստի ընթացքում վերանվանել է «Հանրային հաղորդակցության ռազմավարության»:

	Վերջնաժամկետը՝ 2018թ. մայիս			ռազմավարության վերջնական տարբերակի ներկայացումից հետո ԲՇԽ-ի նիստ չի կայացել:
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 9. Իրազեկության բարձրացման միջոցառումների իրականացում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ կլոր սեղաններ, հանդիպումներ, այդ թվում՝ ազդակիր համայնքների ներկայացուցիչների հետ, հանդիպումներ կրթական հաստատությունների հետ *Վերջնաժամկետը՝* ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ քարտուղարություն	
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ				

Միջոցառում 2. ՀՀ ԱՃԹՆ-ի կայքի ստեղծում

Հայատանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ներկայացուցչության հետ համագործակցության շրջանակում Հայաստանի ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի մշակումն իրականացնում է «Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ-ն: Հաշվետու ժամանակահատվածում ընթացել են կայքի պատրաստման աշխատանքները: Քարտուղարությունն ակտիվորեն համագործակցել է ընկերության հետ: Կայացել են 5 հանդիպումներ, որոնց արդյունքում վերջնական տեսքի են բերվել և հաստատվել են կայքի դիզայնը և կառուցվածքը, ինչպես նաև ընկերությունն իրականացրել է կայքի բովանդակության կառավարման վերաբերյալ դասընթաց քարտուղարության աշխատակիցների համար: Բացի այդ, հաշվետվությունների ձևաթղթերի հաստատումից հետո իրականացվել են ընկերությունների և պետական մարմինների կողմից առցանց ներկայացվող հաշվետվությունների մշակման աշխատանքները: Համակարգի կիրառման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով քարտուղարության կողմից առանձնակի ուշադրություն է հատկացվել ծրագրային լուծումների միջոցով տեխնիկական վրիպակները, բացթողումները և խոտանը առավելագույնս բացառելուն:

Միջոցառում 4. ԱՃԹՆ-ի կայքի համալրում համապատասխան տեղեկատվությամբ (հաշվետվությունների,

տեսագրությունների, արձանագրությունների հրապարակում կայքում)

Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական կայքի ԱՃԹՆ-ի ենթաէջը [2] հաշվետու ժամանակահատվածում մշտապես թարմացվել է, ներկայացվել է ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների իրականացման վերաբերյալ տեղեկատվություն հայերեն և անգլերեն լեզուներով:

Միջոցառում 5. Հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելի լեզվով հրապարակում և տպագրում, սոցիալական գովազդի պատրաստում

Հաշվետու եռամսյակում կազմվել, շահագրգիռ կողմերի հետ քննարկվել և ԲՇԽ-ի կողմից հաստատվել, ապա հանրությանն է ներկայացվել Հայաստանի ԱՃԹՆ-ի 2017 թվականի տարեկան հաշվետվությունը[3]: Հաշվետվությունը էլեկտրոնային եղանակով հաստատվել է ԲՇԽ-ի խմբակցությունների կողմից և հրապարակվել է 2018թ. հունիսի 29-ին (մանրամասների համար տես Միջոցառում 41): Համաձայն ԱՃԹՆ-ի խորհրդի որոշման՝ Հայաստանը պետք է հրապարակեր Հայաստանի ԱՃԹՆ-ի 2017 թվականի տարեկան հաշվետվությունը մինչև 2018թ. հուլիսի 1-ը:

Միջոցառում 6. Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ քարոզչության իրականացում և լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով (YouTube, Twitter, Facebook և այլ ցանցեր)

Շարունակվել են պարբերաբար թարմացվել Facebook[4], YouTube[5] և Twitter[6] ցանցերում ստեղծված Հայաստանի ԱՃԹՆ-ի էջերը, որոնցում հրապարակվում է ԱՃԹՆ-ի ներդրման և ոլորտի վերաբերյալ տեղեկատվություն՝ ապահովելով դրա հասանելիությունը լայն հանրության համար:

ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցությունը ՀՀ ԱՃԹՆ-ի 2017-2018թթ. աշխատանքային ծրագրի 6-րդ միջոցառման անվանման («Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ քարոզչության իրականացում և լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով») հետ կապված՝ դիտարկում է ներկայացրել. այն է՝ հետագայում տարակարծիք մեկնաբանություններից խուսափելու նպատակով ամրագրել, որ այս միջոցառումն իր մեջ ներառում է զուտ ոլորտի վերաբերյալ հասարակության լայն շրջանակների մոտ իրազեկվածության մակարդակի բարձրացում, նրանց շրջանում խնդիրների ճիշտ պատկերացում և գնահատում:

ԱՃԹՆ-ի համապատասխանեցման շրջանակներում օրենսդրական փոփոխությունների արդյունքում Էներգետիկ ենթակառուցվածների և բնական պաշարների նախարարությունը հրապարակել է մետաղական հանքաքար արդյունահանող կազմակերպությունների հետ կնքված ընդերքօգտագործման պայմանագրերը[7], ինչպես նաև ներկայացվել է օգտակար հանածոյի արդյունահանման մասով և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության մասով գործունեության վերաբերյալ տեղեկատվություն[8]՝ այդպիսով իրականացնելով ԱՃԹՆ-ի ստանդարտի 2-րդ պահանջը:

Միջոցառում 7. Հաղորդակցության ռազմավարության մշակում

[2] http://gov.am/am/eiti/
[3] http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/Annual_Progress_Report_2017.pdf
[4] https://www.facebook.com/EITIArmenia/
[5] https://www.youtube.com/channel/UCx_9yOLmQCj_rwy2wYgRh6A
[6] https://twitter.com/EITI_Armenia
[7] http://www.minenergy.am/page/571
[8] http://www.minenergy.am/page/569

Միջոցառում 8. Հաղորդակցության ռազմավարության հաստատում

Երևանում բրիտանական դեսպանատան ֆինանսավորմամբ իրականցվող ծրագրի շրջանակներում ապրիլի 30-ին ՀԱՀ ՊՀԿ-ն Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարությանը ներկայացրեց հանրային հաղորդակցության ռազմավարության լրամշակված նախագիծը, որը շրջանառվել է ԲՇԽ-ի անդամների միջև մայիսի 7-ին: ԲՇԽ-ի անդամները նախագծի վերաբերյալ պետք է կարծիքներ տրամադրեին մինչև մայիսի 21-ը, և տրված ժամանակահատվածում կարծիքներ չեն ստացվել: Հանրային հաղորդակցության ռազմավարության վերջնական նախագիծը կներկայացվի ԲՇԽ-ի հաստատմանը առաջիկա ԲՇԽ-ի նիստի ընթացքում:

Միջոցառում 9. Իրազեկության բարձրացման միջոցառումների իրականացում

Հաշվետու եռամսյակում Երևանում բրիտանական դեսպանատան ֆինանսավորմամբ իրականցվող ծրագրի շրջանակներում Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի կողմից կազմակերպվել են դասընթացներ պետական մարմինների և համայնքների (ապրիլի 26-27) ներկայացուցիչների, ինչպես նաև լրագրողների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (մայիսի 16-17) համար: «Հանքարդյունաբերության թափանցիկությունը հանրային օրակարգում» ընդհանրական խորագիրը կրող դասընթացների ընթացքում Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության փորձագետները ներկայացրել են ԱՃԹՆ-ն, ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքները Հայաստանում, թափանցիկության, հրապարակայնության պահանջը ԱՃԹՆ-ի ստանդարտում և ԱՃԹՆ-ին համապատասխանեցման շրջանակներում կատարված օրենսդրական փոփոխությունները: Լրագրողների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար նախատեսված դասընթացում ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության անդամ Արթուր Գրիգորյանը ներկայացրել է ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատանքը: Պետական մարմինների և համայնքների ներկայացուցիչների հանդիպման ժամանակ ներկայացվել են նաև նրանց կողմից ներկայացվելիք ԱՃԹՆ-ի հաշվետվությունների ձևաչափերը, որոնց շուրջ ծավալվել են նաև աշխատանքային քննարկումներ:

ՆՊԱՏԱԿԸ	**Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակում**			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 12. Ճանապարհային քարտեզի նախագծի հանրային քննարկումներ	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ ճանապարհային քարտեզի նախագծի հրապարակում, հանդիպումներ *Վերջնաժամկետը*՝ ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 14.1. Իրական սեփականատերերի բացահայտման միջգերատեսչական աշխատանքային խմբի (ԱԽ) ստեղծում և	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ միջգերատեսչական աշխատանքային խումբ, հանդիպումներ *Վերջնաժամկետը*՝	Ընթացիկ	ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ, ԱԽ	

օրենսդրական փաթեթի մշակման համար հանդիպումների իրականացում	2018թ. մարտ-մայիս			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 14.2. Իրական սեփականատերերի բացահայտման օրենսդրական փաթեթի շրջանառում և ներկայացում ՀՀ կառավարություն, այնուհետև ՀՀ Ազգային ժողով	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ իրական սեփականատերերի բացահայտման օրենսդրական փաթեթ *Վերջնաժամկետը*՝ 2018թ. մայիս-հոկտեմբեր	Ընթացիկ	ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ, ԱԽ	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 14.3. Իրական սեփականատերերի բացահայտման օրենսդրական փաթեթի քննարկումներ շահագրգիռ կողմերի հետ	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ հանդիպումներ *Վերջնաժամկետը*՝ 2018թ. ապրիլ-հոկտեմբեր	Ընթացիկ	ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ, ԱԽ	
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ				
Միջոցառում 14.1. Իրական սեփականատերերի բացահայտման միջգերատեսչական աշխատանքային խմբի (ԱԽ) ստեղծում և օրենսդրական փաթեթի մշակման համար հանդիպումների իրականացում Հաշվետու ժամանակահատվածում միջգերատեսչական աշխատանքային խումբն անցկացրել է չորս հանդիպում: Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության և Արդարադատության նախարարության ներկայացուցիչների կողմից մշակվել են Ընդերքի մասին օրենսգրքում, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում և Քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու նախագծերը, որոնք ներկայացվել են աշխատանքային խմբի քննարկմանը:				

ՆՊԱՏԱԿԸ	**ՀՀ իրավական դաշտի ուսումնասիրություն, ԱՃԹՆ-ին անհամապատասխանությունների և բացերի բացահայտում**			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 16. Օրենսդրության	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**

ուսումնասիրություն, բացերի բացահայտում, դրանց վերացմանն ուղղված առաջարկությունների ներկայացում	*Արդյունքները՝* հաշվետվություն, գործողությունների պլան *Վերջնաժամկետը՝* 2018թ. մայիս	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ՀԱՀ ՊՀԿ	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 17. Հաշվետվության և գործողությունների պլանի ներկայացում ԲՇԽ-ին	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Վերջնաժամկետը՝ 2018թ. մայիս	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ՀԱՀ ՊՀԿ	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 18. ԲՇԽ-ի կողմից հաշվետվության և գործողությունների պլանի քննարկում և հաստատում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ հաշվետվություն, գործողությունների պլան *Վերջնաժամկետը՝* 2018թ. հունիս	Չի իրականացվել	ԲՇԽ	Հաշվետվության վերաբերյալ դիտարկումները լրամշակման նպատակով ներկայացվել են ՀԱՀ ՊՀԿ-ին:
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N18.1. ԱՃԹՆ-ի հետագա զեկույցներում ֆինանսական հոսքերը ծրագրերի (յուրաքանչյուր արդյունահանման թույլտվության) մակարդակով ներկայացման հնարավորությունների վերաբերյալ ուսումնասիրություն և այդ, ինչպես նաև ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի առաջարկությունների իրականացման համար ճանապարհային քարտեզի մշակում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ ուսումնասիրություն, ճանապարհային քարտեզ *Վերջնաժամկետը՝* 2018թ. հունիս-նոյեմբեր	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, Անկախ ադմինիստրատոր	

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Միջոցառում 16. Օրենսդրության ուսումնասիրություն, բացերի բացահայտում, դրանց վերացմանն ուղղված առաջարկությունների ներկայացում *Միջոցառում 17. Հաշվետվության և գործողությունների պլանի ներկայացում ԲՇԽ-ին* Երևանում բրիտանական դեսպանատան ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրի շրջանակներում ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից մայիսի 7-ին ներկայացվել է ԱՃԹՆ-ի օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծության նախագիծը: Նախագծում ընդգրկված է նաև պատասխանատու հանքարդյունաբերության որոշակի խնդիրների վերաբերյալ նախնական ճանապարհային քարտեզը: Նախագիծը շրջանառվել է ԲՇԽ-ի անդամների միջև, ինչպես նաև ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից ուղարկվել է կարծիքի 15 գերատեսչությունների (նախարարություններ, մարզպետարաններ, Կենտրոնական բանկ, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով): ԱՃԹՆ-ի քարտուղարության, ԲՇԽ-ի և գերատեսչությունների ներկայացված առաջարկությունները և դիտողությունները տրամադրվել են ՀԱՀ ՊՀԿ-ին՝ նախագիծը լրամշակելու նպատակով: Հաշվետու եռամսյակում ընդունվել է ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի «Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության վերաբերյալ օգտակար հանածոյի արդյունահանման և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության մասով գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակելու կարգը, ժամկետները և ձևերը, մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործողների գործունեության վերաբերյալ հրապարակային հաշվետվությունը ներկայացնելու կարգը, ժամկետները և ձևերը, ինչպես նաև պետական մարմինների ցանկը սահմանելու մասին» N 666-Ն որոշումը, որով մասնավորապես հաստատվել են ԱՃԹՆ-ի համապատասխանեցման շրջանակներում օրենսդրական փոփոխություններից[9] բխող ԱՃԹՆ-ի հաշվետվությունների ձևաչափերը, հաշվետվությունների ներկայացման, ինչպես նաև պայմանագրերի և թույլտվությունների մասին ընդհանուր տեղեկությունների հրապարակման կարգերը: Համաձայն որոշմամբ սահմանված կարգի՝ մետաղական օգտակար հանածո արդյունահանող ընդերքօգտագործողները և պետական մարմինները մինչև ս.թ. օգոստոսի 1-ը պետք է էլեկտրոնային եղանակով ներկայացնեն հրապարակային հաշվետվություններ: *Միջոցառում 18. ԲՇԽ-ի կողմից հաշվետվության և գործողությունների պլանի քննարկում և հաստատում* ԱՃԹՆ-ի օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծության նախագիծը մայիսի 7-ին տրամադրվել է ԲՇԽ-ի անդամներին՝ մինչև մայիսի 23-ը կարծիքներ ներկայացնելու վերջնաժամկետով: ԱՃԹՆ-ի օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծության նախագծի վերաբերյալ ԱՃԹՆ-ի քարտուղարության, ԲՇԽ-ի և շահագրգիռ գերատեսչությունների ներկայացված առաջարկությունները և դիտողությունները տրամադրվել են ՀԱՀ ՊՀԿ-ին հունիսի 25-ին: Միջոցառման ժամանակին չկատարումը պայմանավորված է գերատեսչությունների կարծիքների ուշ ներկայացման հետ: *Միջոցառում 18.1. ԱՃԹՆ-ի հետագա զեկույցներում ֆինանսական հոսքերը ծրագրերի (յուրաքանչյուր արդյունահանման թույլտվության) մակարդակով ներկայացման հնարավորությունների վերաբերյալ ուսումնասիրություն և այդ, ինչպես նաև ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի առաջարկությունների իրականացման համար ճանապարհային քարտեզի մշակում* Համաձայն ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի որոշման արդեն 2018 թվականը ընդգրկող Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցում (պատրաստվելու և հրապարակվելու է 2019 թվականին) հարկերի և վճարների հոսքերը հնարավորինս պետք է ներկայացվեն ապագրեգացված՝ ոչ թե ընկերությունների, այլ ծրագրերի մակարդակով:Իրավական և ինստիտուցիոնալ

[9] https://www.e-draft.am/projects/602

առումով դրանց տեղայնացումը ապահովելու նպատակով հաշվետու ժամանակահատվածում քարտուղարության կողմից իրականացվել են ԱՃԹՆ-ի ուղեցույցների և առաջարկություններ ներառող այլ փաստաթղթերի ուսումնասիրություն: Ներկայում ընթանում են քննարկումներ համապատասխան գերատեսչության (Ֆինանսների նախարարություն) ներկայացուցչի հետ՝ պահանջի կատարման ուղղությամբ աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով:

ՆՊԱՏԱԿԸ	**Լավագույն միջազգային փորձի ուսումնասիրություն և ԱՃԹՆ-ին և պատասխանատու հանքարդյունաբերության լավագույն միջազգային փորձին համապատասխանեցման ճանապարհային քարտեզի մշակում**			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 20. Ճանապարհային քարտեզի մշակում միջազգային փորձի ուսումնասիրության նպատակով	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ ճանապարհային քարտեզ *Վերջնաժամկետը*՝ 2018թ. մայիս	Ընթացիկ	ԲՇԽ-ի աշխատանքային խումբ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ՀԱՀ ՊՀԿ	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 21. Ճանապարհային քարտեզի հաստատում ԲՇԽ-ի կողմից	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ գործողությունների պլան, բյուջե *Վերջնաժամկետը*՝ 2018թ. մայիս	Չի իրականացվել	ԲՇԽ	ԲՇԽ-ի կազմի փոփոխությունների պատճառով համապարփակ ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքները հետաձգվել են:
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 23. Մասնակցություն ոլորտին վերաբերող քաղաքականության մշակմանը	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ ներգրավում, կարծիքի ներկայացում *Վերջնաժամկետը*՝ ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ				

Միջոցառում 20. Ճանապարհային քարտեզի մշակում միջազգային փորձի ուսումնասիրության նպատակով

ԱՃԹՆ-ի օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերաբերյալ ուսումնասիրությունը ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից ներկայացվել է մայիսի 7-ին: Ուսումնասիրության շրջանակներում քննվել են պատասխանատու հանքարդյունաբերության լավագույն միջազգային փորձին համապատասխանեցման տարրեր: Մշակվել է պատասխանատու հանքարդյունաբերության նախնական ճանապարհային քարտեզը, որի հիման վրա ԲՇԽ-ն, մասնավորապես՝ ԲՇԽ-ի պատասխանատու հանքարդյունաբերության աշխատանքային խումբը, պետք է ձեռնամուխ լինի պատասխանատու հանքարդյունաբերության համապարփակ ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքներին: ԲՇԽ-ի կազմում փոփոխությունների հետևանքով աշխատանքային խմբի աշխատանքները հաշվետու ժամանակահատվածում չեն իրականացվել:

Միջոցառում 21. Ճանապարհային քարտեզի հաստատում ԲՇԽ-ի կողմից

ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից ԱՃԹՆ-ի օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերաբերյալ ուսումնասիրության շրջանակներում ներկայացված պատասխանատու հանքարդյունաբերության որոշակի խնդիրների վերաբերյալ նախնական ճանապարհային քարտեզը հաշվետու ժամանակահատվածում չի ամբողջականացվել (տես՝ Միջոցառում 20):

Միջոցառում 23. Մասնակցություն ոլորտին վերաբերող քաղաքականության մշակմանը

Հայաստանում հանքարդյունաբերող ընկերությունների գործունեության համապատասխանությունը ոլորտը կարգավորող օրենսդրությանը, այդ թվում՝ ԱՃԹՆ-ի սկզբունքներին համախատասխանող՝ թափանցիկ և հաշվետու հանքաարդյունաբերություն կազմակերպելու նպատակով վարչապետի հանձնարարականով մինչև հուլիսի 9-ը պետք է ձևավորվի աշխատանքային խումբ: Աշխատանքային խմբի կազմում ընդգրկվելու առաջարկով ԱՃԹՆ-ի քարտուղարությունը դիմել է ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի քաղաքացիական հասարակության անդամներին: Աշխատանքային խմբում ներգրավվելու պատրաստակամություն են հայտնել ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության անդամներ Ինգա Զարաֆյանը, Արթուր Համբարձումյանը և Հարություն Մովսիսյանը, ում թեկնածությունները ներկայացվել են Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին:

ՆՊԱՏԱԿԸ	**Հայաստանի ԱՃԹՆ-ի թեկնածության կարգավիճակի ապահովում**			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 38. Դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ դոնոր կազմակերպություններ ի հետ հանդիպումներ *Վերջնաժամկետը*՝ ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 40. Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության հիմնում և աշխատանքների ընթացք	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարություն *Վերջնաժամկետը*՝ ընթացիկ	Իրականացվել է	ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն	

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 41. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի տարեկան հաշվետության կազմում և հաստատում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի տարեկան հաշվետություն *Վերջնաժամկետը*՝ 2018թ. հունիս	Իրականացվել է	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 42. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի գործունեության և ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների, գործողությունների պլանի մոնիթորինգի վերաբերյալ հաշվետվությունների կազմում (եռամսյակային, տարեկան)	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ հաշվետվություններ *Վերջնաժամկետը*՝ եռամսյակը մեկ	Իրականացվել է	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն	2018թ. առաջին եռամսյակային հաշվետվության նախագիծը չի հաստատվել ԲՇԽ-ի կողմից, քանի որ հաշվետու ժամանակահատվածում չի հրավիրվել ԲՇԽ-ի նիստ:
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 43. Համագործակցություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և ԱՃԹՆ-ի անդամ այլ երկրների հետ	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ գրություններ, հանդիպումներ, կոնֆերանս զանգեր *Վերջնաժամկետը*՝ ընթացիկ	Ընթացիկ	ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 44. Մասնակցություն ԱՃԹՆ-ի խորհրդի նիստերին և կոնֆերանսների	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Վերջնաժամկետը՝ ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 45. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստերի անցկացում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստեր *Վերջնաժամկետը*՝ եռամսյակը մեկ	Ընթացիկ	ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ	Իրականացվել է ԲՇԽ-ի հանդիպում առաջին փոխվարչապետ Արարատ

				Միրզոյանի հետ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 49. ԱՃԹՆ-ի անդամավճարի վճարում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Վերջնաժամկետը՝ 2018թ. ապրիլ	Իրականացվել է	ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 49.1. ԲՇԽ-ի և շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների կարողությունների հզորացում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ դասընթացներ, աշխատաժողովներ *Վերջնաժամկետը՝* ընթացիկ	Ընթացիկ	ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն	

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միջոցառում 38. Դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն

Մեկնարկել է Համաշխարհային բանկի դրամաշնորհային ծրագիրը, որի շրջանակներում ակնկալվում է ֆինանսավորել Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի կազմումը, ԲՇԽ-ի ու ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կարողությունների զարգացումը, իրազեկության բարձրացման միջոցառումների իրականացումը, ինչպես նաև օժանդակություն է ցուցաբերվելու իրական սեփականատերերի բացահայտմանն առնչվող օրենսդրական փոփոխությունների նախագծերի մշակման և իրական սեփականատերերի ռեգիստրի ծրագրային ապահովման մշակման աշխատանքներին:

Շարունակվում են Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքի մշակման աշխատանքները, որոնք ֆինանսավորվում են Հայաստանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից:

Միջոցառում 41. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի տարեկան հաշվետության կազմում և հաստատում

Հաշվետու եռամսյակում Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից ընթացել են Հայաստանի ԱՃԹՆ-ի 2017 թվականի տարեկան հաշվետվության մշակման աշխատանքները: Նախագիծը կազմվել է՝ հիմնվելով ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության տիպային նմուշի վրա և որպես օրինակ օգտվելով այլ երկրների տարեկան հաշվետվություններից: Քարտուղարության կողմից մինչ հաշվետվության նախագծի մշակումը կազմվել էր հատուկ հարցաթերթ, որը տրամադրվե էր ԲՇԽ-ի խմբակցություններին՝ նախապես անհրաժեշտ տեղեկատվություն լրացնելու նպատակով, ինչը թույլ է տվել դեռևս նախագծի առաջնային տարբերակի կազմումը դարձնել առավել մասնակցային և արդյունավետ: : Տարեկան հաշվետվությունը ներառում է նախորդ տարվա՝ 2017 թվականի ընթացքում ԱՃԹՆ-ի իրականացման շրջանակներում ձեռնարկված գործողությունների ամփոփ նկարագրությունը, ԱՃԹՆ-ի պահանջներին համապատասխանության գնահատումը, ինչպես նաև աշխատանքային ծրագրում սահմանված նպատակներին հասնելու առումով գրանցված առաջընթացի գնահատականը: Բոլոր շահագրգիռ կողմերը հնարավորություն են ունեցել մասնակցելու տարեկան հաշվետվության կազմման և ԱՃԹՆ-ի իրականացման ազդեցության ուսումնասիրության գործընթացներին: Մասնավորապես, ԱՃԹՆ-ի գործընթացում ներգրավված քաղաքացիական հասարակության խմբերը և արդյունահանողները, չսահմանափակվելով բազմաշահառու խմբի անդամներով, կարծիք են տրամադրել ԱՃԹՆ-ի իրականացման վերաբերյալ, ինչն արտացոլվել է տարեկան հաշվետվության մեջ: Տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից տարեկան հաշվետվությունն էլեկտրոնային եղանակով տրամադրվել է նաև շահագրգիռ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներին, ովքեր սակայն դիտողություններ և

առաջարկություններ չեն ներկայացվել:
Հաշվետվությունը էլեկտրոնային եղանակով հաստատվել է ԲՇԽ-ի խմբակցությունների կողմից և հրապարակվել է[10] 2018թ. հունիսի 29-ին:

Միջոցառում 42. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի գործունեության և ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների, գործողությունների պլանի մոնիթորինգի վերաբերյալ հաշվետվությունների կազմում (եռամսյակային, կիսամյակային, տարեկան)

Հաշվետու ժամանակահատվածում ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից մշակվել է ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների 2018թ. առաջին եռամսյակային հաշվետվության նախագիծը, սակայն այն չի հաստատվել ԲՇԽ-ի կողմից, քանի որ հաշվետու ժամանակահատվածում չի հրավիրվել ԲՇԽ-ի նիստ:

Միջոցառում 45. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստերի անցկացում

Հաշվետու ժամանակահատվածում երկրում կառավարության և ԲՇԽ-ի կազմում փոփոխությունների պատճառով ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի պաշտոնական նիստեր չեն անցկացվել: Հունիսի 8-ին տեղի է ունեցել ԲՇԽ-ի հանդիպում, որն ուներ ճանաչողական նպատակ: Միջոցառումը վարել է ՀՀ առաջին փոխվարչապետ Արարատ Միրզոյանը՝ որպես ԱՃԹՆ-ի չեմպիոն: Հանդիպման ընթացքում ներկայացվել են Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման ընթացիկ աշխատանքները, քննարկվել են Հայաստանի ԱՃԹՆ ԲՇԽ-ի կազմի վերանայմանն առնչվող և ԲՇԽ-ի անդամների կողմից բարձրացված այլ հարցեր:
Կառավարության փոփոխությունների արդյունքում ԲՇԽ-ի խմբակցությունները ներկայացրել են ԲՇԽ-ի նոր անդամների և այլընտրանքային անդամների թեկնածուներ: ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից մշակվել և շրջանառվել է ՀՀ Վարչապետի «ՀՀ վարչապետի 2016 թվականի նոյեմբերի 24-ի N 1104-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծը:

Միջոցառում 43. Համագործակցություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և ԱՃԹՆ-ի անդամ այլ երկրների հետ

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կառավարության աշխատակազմի ԱՃԹՆ-ի պատասխանատուները համագործակցել են ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության տարածաշրջանային պատասխանատուների հետ Հայաստանում ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման և ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման հետ կապված մեկնաբանությունների և խորհրդատվության ստացման նպատակով: Իրականացվել է նամակագրություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ անկախ ադմինիստրատորի ընտրության, հաշվետվության ձևաթղթերի, իրական սեփականատերերի բացահայտման, ծրագրային մակարդակով հաշվետվությունների ներկայացման, երկարացման նամակում արծարծված հարցերի վերաբերյալ մանրամասն պարզաբանումների, տարեկան հաշվետվության հրապարակման և մի շարք այլ հարցերի շուրջ: Ի լրումն ազգային զեկույցի երկարացման համար ուղարկված նամակին, Խորհրդի կողմից որոշման կայացման համար որպես հավելյալ տեղեկատվություն, մայիսին միջազգային քարտուղարությանն է փոխանցվել նաև կառավարության կազմի փոփոխությամբ պայմանավորված երկարացման նոր հիմքերի վերաբերյալ ԲՇԽ-ի նախագահի նամակը:
Իրական սեփականատերերի բացահայտման մասով փորձի փոխանակման նպատակով կապ է հաստատվել Ղազախստանի ԱՃԹՆ-ի ազգային համակարգողի հետ, ում կողմից տրամադրված օրենքները փոխանցվել են համապատասխան միջգերատեչական խմբի անդամներին:

Միջոցառում 44. Մասնակցություն ԱՃԹՆ-ի խորհրդի նիստերին և կոնֆերանսների

Հունիսի 27-30-ը Բեռլինում ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից կազմակերպված ԱՃԹՆ-ի խորհրդի նիստին Հայաստանից մասնակցել են ԲՇԽ-ի կառավարության խմբակցությունը ներկայացնող անդամ Վարդան Գևորգյանը, ԲՇԽ-ի

[10] http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/Annual_Progress_Report_2017.pdf

արդյունահանող կազմակերպությունների խմբակցությունը ներկայացնող անդամ Արմեն Ստեփանյանը և Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության ղեկավար Լիլիա Շուշանյանը: Լիլիա Շուշանյանի և Վարդան Գևորգյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվել են Համաշխարհային բանկի դրամաշնորհային ծրագրի միջոցների հաշվին:
ԱՃԹՆ-ի խորհրդի նիստի ընթացքում որոշում է ընդունվել բավարարել Հայաստանի հայցը և հետաձգել Հայաստանի կողմից 2018թ. ԱՃԹՆ-ի ազգային զեկույցի հրապարակման վերջնաժամկետը՝ մինչև 2019թ. մարտի 9-ը: Մասնավորապես, ԱՃԹՆ-ի խորհուրդը որոշել է.

«Հայաստանին թույլատրվում է հետաձգել զեկույցի հրապարակումը, և զեկույցի հրապարակման վերջնաժամկետը երկարացվել է մինչև 2019թ. մարտի 9-ը: Եթե 2019թ. մարտի 9-ի դրությամբ Հայաստանը չհրապարակի ԱՃԹՆ-ի զեկույցը, Հայաստանի անդամակցությունն ԱՃԹՆ-ին կկասեցվի: Կասեցումը չի վերացվի մինչև 4.8 պահանջի բավարարումը: Եթե կասեցումը ուժի մեջ մնա մեկ տարուց ավելի, ապա ԱՃԹՆ-ի խորհուրդը Հայաստանին կզրկի ԱՃԹՆ-ի անդամակցությունից»:

ԱՃԹՆ-ի խորհրդի որոշման վերաբերյալ ԱՃԹՆ-ի խորհրդի նախագահ Ֆրեդրիկ Ռեյնֆելդտի նամակը ներկայացված է *Հավելված 1-ում:*

Միջոցառում 49. ԱՃԹՆ-ի անդամավճարի վճարում

Հաշվետու ժամանակահատվածում վճարվել է ԱՃԹՆ-ի տարեկան անդամավճարը (10 հազար ԱՄՆ դոլար): ԱՃԹՆ-ի գործադիր տնօրեն Յոնաս Մոբերգի՝ անդամավճարի ստացումն հավաստող նամակը ներկայացված է *Հավելված 2-ում:*

Միջոցառում 49.1. ԲՇԽ-ի և շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների կարողությունների հզորացում

Հաշվետու եռամսյակում Երևանում բրիտանական դեսպանատան ֆինանսավորմամբ իրականցվող ծրագրի շրջանակներում Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի կողմից կազմակերպվել են դասընթացներ պետական մարմինների և համայնքների (ապրիլի 26-27) ներկայացուցիչների, ինչպես նաև լրագրողների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (մայիսի 16-17)համար (մանրամասների համար տես Միջոցառում 9):

ՆՊԱՏԱԿԸ	**ԱՃԹՆ-ի ստանդարտին համապատասխան ամբողջական հաշվետվություն**			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 50. ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրություն	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ նախնական Ուսումնասիրություն *Վերջնաժամկետը*՝ 2018թ. մարտ	Իրականացվել է ուշացումով	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ՀԱՀ ՊՀԿ	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 53. Անկախ	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**

ադմինիստրատորի ընտրություն (մրցույթ և հաստատում)	*Արդյունքները*՝ անկախ ադմինիստրատորի մրցույթի հայտարարություն, մրցույթ, անկախ ադմինիստրատորի հետ կքված պայմանագիր, ԱՃԹՆ-ի զեկույց *Վերջնաժամկետը*՝ 2018թ. ապրիլ-մայիս	Իրականացվել է	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 53.1. ԱՃԹՆ-ի զեկույցի մշակում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ ԱՃԹՆ-ի զեկույց *Վերջնաժամկետը*՝ 2018թ. մայիս-օգոստոս	Ընթացիկ	Անկախ ադմինիստրատոր, ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 55. Պետական գերատեսչությունների և արդյունահանող կազմակերպությունների կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի համար ներկայացվող հաշվետվությունների ձևաչափի և հաշվետվությունների ներկայացման կարգի և ժամկետների մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և հաստատում ԲՇԽ-ի կողմից	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ հաշվետվությունների ձևաչափի նախագիծ, ՀՀ կառավարության որոշման նախագիծ *Վերջնաժամկետը*՝ 2018թ. հունվար-ապրիլ	Իրականացվել է	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, Անկախ ադմինիստրատոր	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 55.1. ՀՀ կառավարության որոշման	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**

ներկայացում ՀՀ կառավարության նիստին	*Արդյունքը՝* ՀՀ կառավարության որոշում *Վերջնաժամկետը՝* 2018թ. մայիս	Իրականացվել է	ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 56. ԱՃԹՆ-ի զեկույցի համար ներկայացվող հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ ուսուցում պետական գերատեսչություններ և արդյունահանող կազմակերպությունների համար	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ ուսուցում *Վերջնաժամկետը՝* 2018թ. մայիս-հունիս	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ՀՀ պետական գերատեսչություններ, անկախ ադմինիստրատոր	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 59. Թարգմանչական աշխատանքներ	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Վերջնաժամկետը՝ ընթացիկ	Ընթացիկ		

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միջոցառում 50. ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրություն

Երևանում բրիտանական դեսպանատան ֆինանսավորմամբ ՀԱՀ ՊՀԿ-ն իրականացրել է զեկույցի նախնական ուսումնասիրության աշխատանքները: 2018թ. ապրիլի 17-ին ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից ներկայացվել է նախնական ուսումնասիրության վերջնական նախագիծը, որում հաշվի են առված ԲՇԽ-ի անդամների կողմից առաջարկված որոշ շտկումներ: 2018թ. ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման նպատակով նախնական ուսումնասիրությունը հրապարակվել է ՀՀ կառավարության պաշտոնական կայքի ԱՃԹՆ-ի ենթաէջում[11]:

Միջոցառում 53. Անկախ ադմինիստրատորի ընտրություն (մրցույթ և հաստատում)

ԲՇԽ-ի որոշմամբ՝ անկախ ադմինիստրատորի ընտրության մրցութային հանձնաժողովում ընդգրկվել են մեկական ներկայացուցիչ ԲՇԽ-ի յուրաքանչյուր խմբակցությունից (Դավիթ Անանյան, Արմեն Ստեփանյան և Արթուր Գրիգորյան): Անկախ ադմինիստրատորի ընտրության գնահատման հանձնաժողովը հաղթող ընկերություն է ճանաչել «Էրնսթ ընդ Յանգ» (“Ernst&Young”) ՓԲԸ-ին: Համաձայն ԱՃԹՆ-ի ստանդարտի՝ բազմաշահառու խումբը պարտավոր է հաստատել անկախ ադմինիստրատորի նշանակումը: ԲՇԽ-ի խմբակցությունները էլեկտրոնային եղանակով հաստատել են անկախ ադմինիստրատորի նշանակումը՝ համաձայն ԲՇԽ-ի աշխատակարգով սահմանված կարգի:

Միջոցառում 55. Պետական գերատեսչությունների և արդյունահանող կազմակերպությունների կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի համար ներկայացվող հաշվետվությունների ձևաչափի և հաշվետվությունների ներկայացման կարգի և

[11] http://www.gov.am/am/armeniaeiti/

ժամկետների մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և հաստատում ԲՇԽ-ի կողմից

Հաշվետու ժամանակահատվածում ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից մշակված՝ պետական մարմինների և արդյունահանող կազմակերպությունների կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի համար ներկայացվող հաշվետվությունների ձևաչափերի նախագծերն էլեկտրոնային եղանակով հաստատվել են ԲՇԽ-ի խմբակցությունների կողմից՝ համաձայն ԲՇԽ-ի աշխատակարգով սահմանված կարգի:

Միջոցառում 55.1. ՀՀ կառավարության որոշման ներկայացում ՀՀ կառավարության նիստին

Հաշվետու եռամսյակում կառավարությանը ներկայացվել և ընդունվել է ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի «Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության վերաբերյալ օգտակար հանածոյի արդյունահանման և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության մասով գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակելու կարգը, ժամկետները և ձևերը, մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործողների գործունեության վերաբերյալ հրապարակային հաշվետվությունը ներկայացնելու կարգը, ժամկետները և ձևերը, ինչպես նաև պետական մարմինների ցանկը սահմանելու մասին» N 666-Ն որոշումը:

Միջոցառում 59. Թարգմանչական աշխատանքներ

Հաշվետու ժամանակահատվածում ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից կազմվել է թարգմանչական ծառայություններ մատուցելու խորհրդատվական ծառայությունների գնման տեխնիկական առաջադրանքը և ներկայացվել է ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ-ին՝ Համաշխարհային բանկի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում թարգմանիչ վարձելու նպատակով:

Հավելված 1

Extractive Industries Transparency Initiative

28 June 2018

Mr Ararat Mirzoyan
First Prime Minister
Republic of Armenia

EITI BOARD ACCEPTS ARMENIA'S REQUEST FOR EXTENSION

Your Excellency,

Congratulations on your appointment as First Prime Minister of the Republic of Armenia.

Following the Reporting deadline extension request submitted to the international EITI Board on 30 March 2018, the Board has granted the extension of the reporting deadline as requested by the MSG. Having reviewed the circumstances around the request the members of the Board agreed that:

> *Armenia is eligible for an extension and the reporting deadline is extended to 9 March 2019. If the outstanding EITI Report is not published by 9 March 2019, Armenia will be suspended. The suspension will not be lifted until requirement 4.8 is met. If the suspension is in effect for more than one year the EITI Board will delist Armenia.*

In taking this decision, the Board noted the efforts of the stakeholders to keep the process going including adopting legal amendments to remove obstacles for EITI reporting. I commend the government and the MSG for setting up their reporting system for systematic disclosure from the outset.

The EITI International Secretariat and other partners stand ready to support you in your efforts to further the transparency agenda.

Yours sincerely,

Fredrik Reinfeldt

Chair
Extractive Industries Transparency Initiative

EITI International Secretariat Skippergata 22, 0154 Oslo, Norway Postboks 340 Sentrum, 0101 Oslo, Norway
+47 222 00 800 secretariat@eiti.org www.eiti.org @EITIorg

Հավելված 2

Extractive Industries Transparency Initiative

9 May 2018

HE Davit Harutyunyan
Minister of Justice
Republic of Armenia

CONTRIBUTION TO THE INTERNATIONAL MANAGEMENT OF THE EITI

Hon Minister Harutyunyan,

I wish to express our gratitude to the Government of Armenia for the financial contribution to the international management of the EITI. Contributions by implementing countries will be used to support crucial services to implementing countries, namely Validation and technical support on implementation.

We look forward to working with your government to facilitate the EITI implementation in Armenia, to continue on the road towards more openly available data, towards mainstreamed reporting and improvements in beneficial ownership reporting.

We welcome our continued collaboration to ensure greater transparency and accountability in the extractive industries.

Your sincerely,

Jonas Moberg
Executive Director
Extractive Industries Transparency Initiative

EITI International Secretariat Skippergata 22, 0154 Oslo, Norway Postboks 340 Sentrum, 0101 Oslo, Norway
+47 222 00 800 secretariat@eiti.org www.eiti.org @EITIorg